

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2015-2017

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ)
ՀԱՅՏ**

ՀՀ Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների 2015-2017թթ ՄԺԾԾ ծրագրում ընդգրկված ավտոճանապարհների կապիտալ վերանորոգման հիմնավորում

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները¹

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը.

ՀՀ Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհները ,որոնք ընդգրկված են 2015-2017թթ ՄԺԾԾ ծրագրում . վերջին 10-15 տարիներին չեն ենթարկվել կապիտալ վերանորոգման:Ճանապարհները դարձել են անանցանելի և գտնվում են անմխիթար վիճակում:Քանի որ մարզը գտնվում է հիմնականում լեռնային և նախալեռնային գոտիներում ,ձմեռը տևում է 4-5 ամիս,տեղացող առատ ձյունը և ցրտաշունչ ձմեռը իր բացասակն հետևանքներն է թողնում ճանապարհային ցանցի պահպանման և շահագործման վրա,ուստի անհրաժեշտություն է առաջանում ամեն տարի կազմակերպել ինրպես ճանապարհի ընթացիկ այնպես էլ կապիտալ հիմնանորոգման աշխատանքներ:

1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Վերջին երկու տարիների ընթացքում մարզային նշանակության ավտոճանապարհների վրա ՀՀ պետ.բյուջեով և այլ ծրագրերով կատարվել է որոշակի աշխատանքներ ,սակայն այն բավարար չէ մարզային նշանակության ճանապարհային ցանցը դարձնել նորմալ երթևեկելի:Մարզային ենթակայության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների հիմքում դրված է հրատապ վերանորոգման ենթակա ավտոճանապարհները և մի քանի համայնքներ իրար հետ կապող ավտոճանապարհներ:

1.3 Հիմնական խնդիրները

Մարզային ենթակայության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների հիմքում դրված է հրատապ վերանորոգման ենթակա ավտոճանապարհները և մի քանի համայնքներ իրար հետ կապող ավտոճանապարհներ, որը կնպաստի գյուղական աղքատության կրճատման, գյուղատնտեսության աճի զարգացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման:

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ

ժամանակահատվածում

2.1. Նպատակները

Բարելավել մարզային ենթակայության ավտոճանապարհների ցանցը և դարձնել նորմալ երթևեկելի:

2.2. Գերակայությունները

Քանի որ վերջին 10-15 տարիներին մարզային ենթակայության ավտոճանապարհները չեն ենթարկվել կապիտալ վերանորոգման դարձել են անանցանելի .ուստի 2015-2017 թթ ՄԺԾԾ ծրագրում ներկայացված ավտոճանապարհները վերանորոգվելու դեպքում կբարելավվի ճանապարհային ցանցը: